Մրցույթ՝ Երևանի «Ֆ. Նանսենի անվան թիվ 150 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի բնագիտության /10 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում ՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է /Ձև 1/
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /Ձև 4/
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3*4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության օրվանից մինչև 2023թ-ի նոյեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր ՝ ժամը 10.00-ից մինչև 15.00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. նոյեմբերի 9-ին՝ ժամը 13.00-ին**, Երևանի Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան ՆորՆորքի 4-րդ զանգված Ակ. Բակունցի 6: Տեղեկությունների համար զանգահարել ՝ /010/ 64 50 00 հեռախոսահամարով: